Աստղաբլուր Մով. Կաղ. Ա. ԻԹ. 75։

Սալիանից 4, 5 վերստ հեռու հին քաղաքատեղ է Ղըրխ-Զըրաղ անունով. (40 ճրագ) որոյ մօտ բղխում է նաւթ և գոյանում է առատ աղ[1])։

Երեւի 40 ճրագները կազմելեն մի աստղազարդ բլուր, որ է այլաբանութիւն մի նշանաւոր գործոյ։

Մովսէս Կաղանկատուացին (Ա. ԻԹ. 73.75.) գրէ, «Զնդ այն ժամանակս թագաւորն Ռոսմոսոքեան իւրովք զօրօք և թոռելական զնդիւն զումարեալ ժողովեաց զամենայն զօրս Հոնաց և էանց յայս կոյս Կուրական գետոյն, դարձեալ յՈւտէացւոց գաւառն, և ածեալ նստուցանէր զղակիշ իւր մերձ ի Խաղխաղ քաղաք, (այժմեան Ղազախ քաղաքն) . . . ։

Հրամայէր ասպատակել զաշխարհն Սղուանից, Հայոց և Վրաց . . . և զմնացեալսն գերի առեալ ի տեղւոջն բակարգել առնէին, բայց կին մի Թագուհի անուն, յՈւտի գաւառէ ի Բաղնաց գեղջէ . . . անարգէր զնոսա . . . և ապա բառնային զգլուխ երանելւոյն սուսերաւ . . . յանկարծակի նշան զարմանալի երեւեալ ի Ցեառնէ, ակն յայտնի ամենեքեան տեսանէին լոյս ծագեալ ի տեղւոջն, ուր սուրբն Թագուհի վկայեաց . . . և հարուստ ժամանակաւ լոյս աստեղանման ծագեալ ի տեղւոջն. փարէր ի վերայ սրբոյ նահատակին, զոր տեսեալ բազմութեան մարդկան՝ զանուն տեղւոյն Աստղաբլուր անուանեցին մինչեւ ցայսօր»։

Այս յիշեալ Աստղաբլուրը գտնւում է հին Սալեանի հանդէպը Բօժի-Պրօմիսլայ ձկնորսատեղւոյ մօտ, որոյ անունով և այն բլուրը և դիմացի դաշտը և բլրակները անուանւում են Ղըրխ-Զրաղլար։

Ինչպէս ասացին Սալեանցի բանագէտք, հին Սալեանումն մնալ անհնարին լինելոյ պատճառաւ՝ շոքի և օձերի նեղութիւնից՝ փոխադրեալ են այժմեան տեղը, 60,70 տարի յառաջ։

Պերոզապատ՝ Մուղանու դաշտումն Պարտայի արեւելեան

---

[1]) Հին Սալեանը գտնւում է Բօժի Պրօմիսլայ ձկնորսատեղի մօտ. իսկ այժմեան Սալեանը շինուած 60 կամ 70 տարի յառաջ, ինչպէս վկայեցին Սալեանի Ախունները և ծերունիք։